

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Գ. ԱՐԲԱՆՈՎՅԱՆ

§ 1

Ծածկագրությունը հայ մատենագրության մեջ հայտնի է տառեր անուններով՝ «փակագրութիւն», «գրափակութիւն», «գրչափակութիւն», «ծածկագրութիւն» և այլն: Այս բոլոր անվանումների համար հիմք է հանդիսանում ակրոսի ծածկագրությունը: Հայերեն «փակագրութիւն» բառը, իր իմաստով, համապատասխանում է հունական «ακρογραφία» և ռուսական «ташграфія» բառերին:

Ինչպես բոլոր ժողովուրդների մատենագրության մեջ, այնպես էլ հայկականում, ծածկագրերը գործ են ածվել քաղաքական, ռազմական, բժշկական, արքիմիական և այլ բնույթի անգեղություններ գաղանադրելու համար: Սակայն բոլորովին այլ նպատակ են հետապնդում ձևազարդ ժողովածուներում գործածվող ծածկագրությունները. ձևազարդ վրա տարիներ տքնող մեղմածան գրիչները երբեմն բնագիծում են իրենց հոգնատանջ աշխատանքները և գրչախաղեր անում՝ ծածկագրում են ձևազարդ գրչության թվականը, գրչության վայրը, պատվիրատուի անունը և այլն: Նման ծածկագրերը, փաստորեն, ծածկագրեր չեն մեր ներկա հասկացողությամբ, այլ պարզապես գրչախաղեր:

Փրիչներն իրենց անունները ծածկագրելիս, անշուշտ, նպատակ են ունեցել թույլ չտալ, որ հետագայում անբարեխիղճ մարդիկ ծնվեն իրենց անունները հիշատակարաններից և փոխարենն իրենցը գրեն: Նրանք ցանկացել են, որ իրենց անունները հայտնի լինեն միայն գիտուն մարդկանց, որոնց վստահել են և հավատացած են եղել, որ նրանք չեն ծնվի գրչի մշակների բարի հիշատակը և չեն յուրացնի նրանց «ողորմիտ»-ը:

Ուշագրություն արժանի է այն, որ ծածկագրող անձինք, իրենց ծածկագրության սկզբում կամ վերջում, հաճախ թողել են ընթերցողի ուշագրությունը գրավող էպիգրամներ. «Այս է փակագիր, խմատուցն խմտույ, անխմատուց զարմանայ»¹, «Ո՛վ եղբայր, գայս փակագիրը դու կարդա, րէ չէ փրկի տուր (այսինքն՝ փութագ փչիր—Ա. Ա.) և հագայ»², «Թէ դպիր ես քնքերցիր, րէ տգէտ, յիմարացիր»³, «Ով որ գիտնայ՝ կկարդայ, ով չգիտնայ, նա լավորտայ (այսինքն՝ կլաղիլի, կպաղանձիլի—Ա. Ա.)»⁴ և այլն: Ձևազարդ վրա աշխատող մասնագետը, բնական է, չէր ցանկանա համբալի գերում գտնվել և կաշխատեր բանդել հանգրիցած ձևազարդ խորհրդավոր հանդուցյուններ:

Հայկական ծածկագրությամբ, եթե չհաշվենք առանձին անձանց պատահական և միջանկյալ հիշատակություններն ու հրատարակությունները, լրջորեն գրադվել են միայն ակադեմիկոս Բրոսսեն և սրբոք. Հ. Աճառյանը: Առաջինը հայ ծածկագրության մասին հասուն ուսումնասիրություն է գրել Փրանսերեն լեզվով «Varietes arméniennes» վերնագրով և տեղափորել Պետերբուրգում լույս տեսնող Ռուսական կայսերական Գիտությունների ակադեմիայի «Melanges Astatiques» տեղեկագրում՝ 1864 թվականին (հատոր V, էջ 65—77): Իսկ սրբոք. Աճառյանը «Հայոց ծածկագրերը» վերնագրի տակ հատուկ գլուխ է նվիրել այդ հարցին իր «Հայոց գրերը» խորագրով արժեքավոր աշխատության մեջ

¹ Հայկական ՍՍՏՊ Պետ. Մատենադարան, ձեռ. № 7709, էջ 395:

² Հ. Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձևազարդ Մատենադարանին Մխիթարյանց ի վիեննա, հատ. Բ, վիեննա, 1924, էջ 823:

³ Երուսաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարան, ձեռ. № 1279, էջ 455:

⁴ Ե. Լավայան, Ցուցակ հայերեն ձևազարդ Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 250:

(էջ 460-482): Նույն աշխատություն հավելվածում նա բերել է իրեն հայտնի ծածկագրությունների և ինչ վերաբերում է ծածկագրի տեքստերին, ապա նրանց մի զգալի մասը հրատարակված է ձեռագրաց ցուցակներում: Այսպես, ծածկագրություններ են հրատարակված Հ. Տաշյանի, Բ. Սարգսյանի, Ե. Լալայանի, Հ. Աճառյանի, Ն. Ակինյանի, Ա. Սյուրմեյանի, Ն. Պողարյանի և այլ հեղինակների կազմած ձեռագրաց ցուցակներում: Արմենքավոր մի քանի ծածկագրեր վերջերս հրատարակեց Լ. Քաչիկյանը իր կազմած հիշատակարանների ժողովածուներում: Ծածկագրություն առանձին լատինյան հրատարակել են Գ. Տեր-Մկրտչյանը «Արարատ» ամսագրում⁵, Գ. Բաճ. Աղանյանը «Բուսան հայոց պատմություն» մեջ⁶, Ժիրայր Հիսուսյան քահանան իր մի ուսումնասիրությունում⁷ և այլն:

Հայտնի և հրատարակված ծածկագրություն մեծ մասը վերծանված է, բայց երբեմն պատահում են նաև ծածկագրեր, որոնց լատինյան հայտնի չի եղել և զբանք մնացել են չվերծանված վիճակում: Մեր ներկա ուսումնասիրությունն նպատակն է կանգ առնել մի քանի չվերծանված ծածկագրերի վրա և փորձել վերծանել զրանք:

§ 2

Ազգագրապետ Ե. Լալայանը իր կազմած Վասպուրականի ձեռագրաց ցուցակում հրատարակել է Շատախի Թադ գյուղի Մխիթար քահանայի երբեմնի սեփականությունը հանդիսացող մի ձեռագրի հետևյալ փոխարինագիրը և սյունագիրը ծածկագրությունը.

.. Վ Մ է Թ Բ Ի . Դ է Ը Դ Ե Դ Ե Դ Ե .

|| :::: | . |||| . |||| . : : : . |||| :::: | . | . ||| . > : ⁸

Հիշատակարանից երևում է, որ ձեռագիրը գրվել է Երուսաղեմում 1339 թվականին, չովհաննես գրչի կողմից, իսկ 1620 թվականին սեփականություն են հանդիսացել ոմն Վարդանի:

Լալայանը ծածկագրությունը բողբ է առանց վերծանության. Պատմական գիտությունների թեկնածու Լ. Քաչիկյանը իր կազմած XIV դարի հիշատակարանների ժողովածուի մեջ բերել է Լալայանի հրատարակած այդ ծածկագրությունը և փոխարինագիրը ծածկագրով վերծանել միայն առաջին տողը՝ «Գիրքս է աւետարան», իսկ շարունակությունը համարել «անհասկանալի»⁹:

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ սյունագիրը չբացահայտված սովորական ծածկագրություն է, միայն ծածկագրված են հաջորդված բառեր և հրատարակություն ժամանակ որոշ կետեր դուրս են թուել (մենք գտնում ենք, որ այդ կատարվել է հրատարակության ժամանակ, որովհետև սյունագրերի մոտից պակասում են երկուական կետեր վերևից. նման ձևով կետերը կարող էին դուրս թուել միայն տպագրական շարվածքից):

Բաց թողնված կետագրական սխալներն ուղղելուց հետո, Լալայանի ծածկագրությունը վերծանվում է.

|| :::: | . |||| . |||| . [:] | | . | . | ||| [::] | . | | [::]
ձ ա ա յ ի Գ Բ Գ ա

«Ծառայի Գրգոյ»: Այստեղ «ծառայ» բառի մեջ հաջորդված է «ա» տառը, իսկ «Գրգոյ» բառի մեջ՝ «ո» տառը: Գեորգ անունը XIV դարի ձեռագրերում սովորաբար պատահում

⁵ Հմմտ. Հ. Աճառյան, հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 474-475:

⁶ Մխիթարյան Գալուստ Տեր-Մկրտչյան, Ներսիսյան ծածկագիր (տե՛ս «Արարատ» ամսագիր, 1888, հունվար, էջ 35-19):

⁷ Գ. քոն. Աղանյան, Գիւսան հայոց պատմութեան, Գ գիրք, Թիֆլիս, 1891, էջ 842-851:

⁸ Ե. Լալայան, Յուդակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 198:

⁹ Լ. Քաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրաց հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 322:

են «Գորրոգ» ձևով: Անհավանական չէ սակայն, որ այսպեղ կարող է հապաված լինել և «Գրիգոր» բառը:

Այսպիսով, ամբողջ ծածկադրությունը պարունակող հատվածը պիտի կարդալ. «Գիրքս և աւետարանն ծաւ[ա]յի Գ[ր]գայն»:

§ 3

Անկյուրիայի ձեռագրաց ցուցակում, որը կաղափել է բանասեր Բ. Վ. Կյուլենսերյանը, Անկյուրիայի կարմիր վանքի Մատենադարանի № 164 ձեռագրից բերված է ծածկադրություն պարունակող հետևյալ պարբերությունը. «Վերբայտին նորոգեցաւ Տարեգիրքս, որ կոչի Ղաշուց ձեռամբ և անիմաստ

ԽՉ ԵԶ ՈՔ ԽՉ ԺԱ ԳՋ ԼՔ ԺՆ ԺՆ ՈՔ ԶՓ

ձեռամբ իմով կաղմեցի զայս, յիշեցէք ի մաքրափայլ աղաթս ձեր զուսուցիչն իմ տէր Մկրտիչն, որ բազում աշխատութեամբ ուսուց կաղմութեամբ ա[ր]հեստս... Թվին ՌճԻԷ (1678) յունվար ամսոյ ի Ի (20)»¹⁰:

Կյուլենսերյանը ծածկադրությունը թողել է առանց վերծանության: Չի հաջողվել այն վերծանել նաև Կյուլենսերյանի ձեռագրաց ցուցակի Անթիլիասի հրատարակիչներին, որոնք ծածկադրությունը թողել են առանց ծանոթագրություն:

Կյուլենսերյանի ընդօրինակած այս ծածկադրությունը մեզ հաջողվեց վերծանել մեծ զժպարություն, որովհետև ծածկադրության տեքստում բաց են թողնված զրչական մի բանի սխալներ:

Ծածկադրությունը, ինչպես պարզվեց, փոխարինադիր է երեք տարբերակներով. Անհրաժեշտ ուղղումներ կատարելուց հետո, ծածկադրությունը վերծանվում է.

ԽՉ ԵԶ ԴՔ ԽՉ ՄԱ ԾՋ ԼՔ ԺՆ ՈՔ ԶՓ
Տէ րՊ աղ տէ սա րք հԹ ոխ աթ ցի

Վերծանվում է. «Տ[Է]ր Պաղտէօսար ք[ա]հ. Թոխաթցի»:

§ 4

Հայկ. ՄՍՈՒ Պետ. Մատենադարանի № 6644 ձեռագրում պարունակվում է մի վերին աստիճանի ինքնատիպ ծածկադրություն, որի մի նմուշը հայտնի է Գրիգոր Տառնեղու ձեռագրից: Դրա նմանահանությունը հրատարակել է Ալիշանը իր «Այբարատ» մեծարժեք աշխատության մեջ (էջ 197): Ծածկադրության մեջ օգտագործված են հայկական տասերը կողբին զրված մեկից-չորս կետ: Բերում ենք ծածկադրության լուսանկարը¹¹:

Հ... Ը... Զ... Բ... Կ... Կ...
... Ը... Զ... Բ... Կ...
... Զ... Բ... Կ... Զ...
Զ... Բ... Կ... Զ...
Կ... Կ... Զ... Կ... Զ...
Զ... Զ... Զ...

¹⁰ Բ. Վ. Կյուլենսերյան, Յուցակ հայերեն ձեռագրաց կարմիր վանուց Անկյուրիո, Անթիլիաս, 1956, էջ 824:

¹¹ Հայկական ՄՍՈՒ Պետ. Մատենադարան, ձեռ. № 6644, թ. 132:

Այս ծածկագրությունը, որքան մեղ հայտնի է, դեռ չի վերծանված: Նա ունի շատ պարզ կառուցվածք. տրված հայկական տասի համարժեքը գաղտնագրված է կետերի հաջորդական թվական հետևողականությամբ՝ հայկական այբուբենի շարքով: Այսպես օրինակ, «Ձ» ասոր հորո կետերով հավասար է «Ե»-ի, «Ճ» տասը չորս կետերով հավասար է «Հ»-ի և այլն: Առաջնորդվելով այս սկզբունքով, ծածկագրությունը վերծանվում է.

Ձ...	Բ...	Ճ...	Բ...	Վ...	Գ...
Յ	Ի	Հ	Ե	Կ	Է
Ի...	Բ...	Վ...	Ա	Ի...	Վ...
Բ	Ի	Մ	Ս	Բ	Բ
Ա	Տ...	Ա	Վ...	Թ...	Ա
Ս	Փ	Ս	Ե	Լ	Ն
Ծ...	Ա	Բ...	Ձ...	Ջ...	Մ...
Գ	Ս	Լ	Թ	Ն	Ճ
Գ...	Վ...	Ա	Վ...	Գ...	Բ...
Ե	Բ	Ա	Բ	Ե	Լ
Թ...	Տ...	Թ...	Ջ...		
Լ	Կ	Ի	Ն		

Վերծանվում է. «Յիշեցէք ի մաքրափայլ ազաւթս ձեռ՝ Արեւելցիս»: Ծածկագրող հեղինակը՝ եղիշե Արեւելցին է, XVI դարի հեղինակ, որի թողած բժշկական երկու ծածկագրերի մասին հետո խոսելու ենք:

§ 5

Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի № 234 ձեռագրում, որն ընդօրինակված է 1518 թվականին Ղուկաս և Մելիքոսեթ գրիչների կողմից, գրված է հետևյալ ծածկագրով. «Գրեցաւ զիրս ձեռամբ յոզնամեղ և տրուպ Բ Բ Բ Ե Ձ Գ Բ Ի Ի. Ժ Ժ. Ժ Ժ. Բ Գ. Զ. Զ. Մ Մ. Ժ Ժ»¹²:

Ծածկագրության այս տեքստը, հրատարակել է բանասեր Բ. Սարգսյանը իր կազմած ձեռագրաց ցուցակում, սակայն չկարողանալով վերծանել, թողել է հետևյալ ծանոթությունը. «Յուրաքանչյուրին վրա կետեր դրված, որ անունը և մականուն կձևացնեն, բայց ինձ համար մնացին անլուծելի»¹³:

Ընդամենը ծածկագրի սկզբունքով գաղտնագրված մի բան գտնում ենք նաև Հայկ. ՍՍԻ Պետ. Մատենադարանի № 5198 ձեռագրում: Հաջորդ էջում բերում ենք ձեռագրի ծածկագրությունը պարունակող համալսման լուսանկարը:

Հայկական ՍՍԻ Պետ. Մատենադարանի № 5198 ձեռագրի Մելիքոսեթ գրչի խմբի ծածկագրությունը նույնպես չի վերծանված: Ձեռագրի քարտը լրացնող մասնագետը, չկարողանալով վերծանել ծածկագրությունը, քարտի վրա թողել է հետևյալ նշումը. «Անունը ծածուկ է մնում»:

Այս ծածկագրության կազմելու սկզբունքը, ինչպես պարզվեց մեր ուսումնասիրությունից, հետևյալն է. կետեր ցույց են տալիս հայկական այբուբենի հաջորդական չորս իննյակ տասերի շարքը՝ դասավորված ըստ միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների, իսկ տասերը՝ տվյալ իննյակի համարական կարգը: Այս ծածկագիրը, իր սկզբունքով, շատ նման է գծակետագրի ծածկագրին, միայն այստեղ գծերի դերը կատարում են կետերը, իսկ կետերի դերը հայկական այբուբենի ինը՝ միավոր թվանշան ունեցող տասերը: Ծածկագրության այս տեսակը, հիմք ունենալով կազմելու ձևը, մենք անվանում ենք «կետազիլ» ծածկագիր:

¹² Հայկական ՍՍԻ Պետ. Մատենադարան, ձեռ. № 6644, թ. 132բ:

¹³ Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատեն.-ին Մխիթ., հատ. I, էջ 536:

¹⁴ Նույն էջում:

Պետական Մաաենագարանի ծածկագիրը հետևյալն է.

[illegible]

Բերում էնք այս ծածկադրի բանալին.

u p q r t u t r p

w f q 7 t y t c p

ш р 7 7 6 4 5 р р

d h L h d y s d n

$\frac{1}{2}$ $\frac{1}{3}$ $\frac{1}{4}$ $\frac{1}{5}$ $\frac{1}{6}$ $\frac{1}{7}$ $\frac{1}{8}$ $\frac{1}{9}$

κ δ ι ζ η π ζ υ ρ ρ

ω ρ α η ϵ γ ξ Γ β

n u q m p y l t p

Ծածկագրումը կազմվելու սկզբունքը հայտնի դառնալուց հետո, այլևս դժվար չէր գերծանել վերը բերված ծածկագրի տեքստը:

Բանասեր Բ. Սարգսյանի հրատարակած ծածկադրի առաջին մասը, կետադրական անհրաժեշտ շտկումներ կատարելուց հետո, վերծանվում է.

$\begin{smallmatrix} \cdot \\ \cdot \\ R \\ U \end{smallmatrix}$
 $\begin{smallmatrix} \cdot \\ \cdot \\ R \\ h \end{smallmatrix}$
 $\begin{smallmatrix} \cdot \\ \cdot \\ R \\ j \end{smallmatrix}$
 $\begin{smallmatrix} \cdot \\ \cdot \\ C \\ b \end{smallmatrix}$
 $\begin{smallmatrix} \cdot \\ \cdot \\ Q \\ n \end{smallmatrix}$
 $\begin{smallmatrix} \cdot \\ \cdot \\ A \\ u \end{smallmatrix}$
 $\begin{smallmatrix} \cdot \\ \cdot \\ R \\ h \end{smallmatrix}$

Այս ծածկագրության երկրորդ մասը սովորական գումարգիր ծածկագրություն է և վերծանվում է.

ՌՌ. ԺԺ. ՃՃ. ԲԳ. 33. ՄՄ
Ս ի մ ե ո ն

Ուրեմն՝ Վենետիկի Միթիթարյանների № 234 ձեռագրի ծածկագիր հեղինակը Սթ-մենն է:

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 5198 ձեռագրի տեքստը վերծանվում է.

Ձ Ձ Ե Դ Ձ Է Դ Զ
Ն ռ ռ ռ ռ Ն Ն Կ

Այս ձեռագրի գրիչը, ըստպես տեսնում ենք, Նորտունի գրիչն է: Հավանական է սա լինի Կիրակոսի որդի Նորտունի, որը 1463 թվականին Արծկում ձեռագիր վաճառելու ժամանակ գնի միջնորդ է հանդիսացել Հովհաննես գրչի և տանուտեր Էդիլշահի միջև¹⁵: Եթե ճիշտ է մեր այս ենթադրությունը, ապա ձեռագրի գրչության ժամանակը պիտի համարենք ոչ թե XVI դարը, ինչպես նշված է քարտի վրա, այլ XV դարը:

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի վերը հիշված ծածկագիրը պարունակող պարբերության մեջ կա գումարգիր մի խասը ծածկագիր, որ նույնպես չի վերծանվում: Բաց թողնված տառերի լրացում կատարելուց հետո, այն վերծանվում է հետևյալ ձևով.

	աա	[CC]	աա	22	{բգ}	խխ	եե	ճճ
Բաց թողած տառեր	բ		—	—	—	—	—	—
Վերցրել է գումարը	—	ա	—	—	ե	—	—	—
Վերցրել է գումարի հաջորդը			բ	ա		դ	ի	
Վերցրել է գումարի երրորդը								ն

Այսպիսով, նշված պարբերությունը ամբողջովին վերծանված ձևով կկարդացվի.

«Արդ՝ գրեցաւ սուրբ տառս, որ ասի Մաշթոց, ձեռամբ ըրադմամեդ և անիմաստ սուտանուն Նորտունի Զահրէկալիս, անուամբ Զահրէկալ և գործովս մեղսամած և մեղսասէր: Արդ՝ երես անկեալ աղաչեմ ձեզ արտասուած թոր աշաւք, որք հանդիպիք այս աստուածախօս տառիս, ով սուրբ մանկունք եկեղեցւոյ, կարգալով կամ օրինակելով, յիշեցէք մաքրափայլ յաղօթս ձեր դանարժան դժող սորա և զուսուցիչն իմ Բարսեղ, զոր Տէր Աստուած...» (այստեղ ընդհատվում է տեքստը):

§ 6

Հայկական ամենաբարդ և միաժամանակ ամենահետաքրքիր ծածկագրերից է «եռագիր» ծածկագիրը: Մեղ հայտնի է այս ծածկագրի միայն երկու տեքստ՝ մեկը Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 193 ձեռագրում Հովհաննես գրչի 1299 թվականի ընդօրինակությամբ, իսկ մյուսը՝ Անգլիայի Օքսֆորդ քաղաքի Բոդլյան գրադարանի սեփականությունը կազմող հայկական, մի ձեռագրում (№2): Այդ նույն ծածկագրությունից մի տող, առանց աղբյուրը ցույց տալու, բերել է Հ. Աճառյանն իր «Հայոց գրերը» աշխատությունում:

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանի եռագիր ծածկագրի տեքստը հետևյալն է.

«ղջք. հչւ. ցոց. ժճո. եծշ. խծտ. ժճո. բիմ. բիս.
բիս. ժճո. բիմ. գիւն. դկց. էհչ. դիտ. դկց. բիս.
դիտ. ծշր. բիմ: Թէ կարդաս՝ իմաստուն ամս ես»¹⁶:

¹⁵ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Երևան, 1948, էջ 85:

¹⁶ Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռ. № 193, Թ. 174:

Իողլյան զրադարանի հայկական բաժնի № 2 ձեռագիրը, որը բովանդակությունով վարդան վարդապետի «Մեկնութիւն Սաղմոսաց» աշխատությունն է, գրիչն է Սիմեոնը՝ ստացողը՝ Դավիթ քահանան, ընդօրինակված է 1610 թ., պարունակում է ծածկագրութեան հետևյալ տեքստը.

«Արդ զրեցաւ այս սուրբ զանձարանս ձեռամբ մեղսաների և անհմուտ անձան և անծոց զրչի ԲԻՄ. ԲՄՍ. ԲԻՍ. ՀԶԻ. ԶԿՅ. ԴԽՄ. Լոկ անուն երիցուիս, որդի լուցրացի պարոն Նիկողայոսին, չարութեամբ լցեալ և մեղաւք դարածեալ»¹⁷: Այստեղ լուցրացի ասելով նկատի ունի այն ժամանակվա Լեհաստանի Լուցր քաղաքից:

Հայկական ՍՍԽ Պետ. Մատենադարանի և Բողլյան զրադարանի ձեռագրի վերջը բերված ծածկագիրը մինչև այժմ դեռ չի վերծանված:

Ծածկագրութեան երկու տեքստերն էլ, ինչպես տեսնում ենք, կազմված են հայկական երեքական տառանիշերից: Առաջին հայացքից դժվար չէ նկատել, որ երեքական տառերի այս խումբը ունի որոշ սխառում. այստեղ դուգակցված են համարական նույն կարգի տառերը՝ վերցված միավորների, տասնավորների, հարյուրավորների և հազարավորների շարքից՝ Այսպես, առաջին երեք տառերի թվանշանների արժեքն է 90, 900, 9000, երկրորդինը՝ 6, 600, 6000 և այլն:

Նույն ծածկագրի բանալին, բարեբախտաբար, մեզ անհայտ աղբյուրի հիման վրա, բերվել է պրոֆ. Հ. Աճառյանի «Հայոց զրեբր» աշխատության մեջ¹⁸: Ստորև բերում ենք այդ բանալին:

ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ
ժՀո	խո	լավ	խնա	ժՀր	կոց	հՀւ	լպփ	ղՋբ
ժ	ի	լ	խ	ծ	կ	հ	ձ	դ
աՀո	բոս	գլվ	դնա	եՀր	դոց	եՀւ	ըպփ	թՋբ
ճ	մ	յ	ն	շ	ո	չ	պ	ջ
աժո	բիս	գլվ	դխո	եծր	դկց	եհւ	ըձփ	թդբ
ո	ս	վ	ո	բ	ց	ւ	փ	բ
աժճ	բիմ	դլց	դին	եձշ	դկո	էհչ	բձպ	թդջ

Պրոֆ. Հ. Աճառյանն իր նշված աշխատության մեջ բերել է ծածկագիր հետևյալ տեքստը և նրա վերծանությունը.

բիմ	դկց	եհչ	եձշ	իմս	դխո	բիս	ժՀր	բիմ	եձշ	դկց	իմս
Ս	ո	ւ	բ	բ	ն	Մ	ե	ս	բ	ո	պ

Մեզ համար դժվար է որոշել, թե պրոֆ. Հ. Աճառյանն այս ծածկագրությունը որևէ բնագրից է վերցրել, թե՞ ինքն է ստեղծել, որովհետև այդ մասին նա ոչինչ չի ասել:

Սկզբում, ծանոթ չլինելով պրոֆ. Հ. Աճառյանի հրատարակած բանալու հետ, փորձեցինք այս ծածկագիրը բաց անել մեզ ծանոթ հայկական ծածկագրերի բանալիներով, բայց ոչինչ չստացվեց: Մեծ աշխատանքից հետո միայն պարզվեց, որ ծածկագրված տեքստի առանիշերը պիտի վնասվեն ո՛չ թե հենց իրեն՝ ծածկագրութեան մեջ, այլ նրանից դուրս: Այսպես, առաջին երեք տառերի մեջ կան 90-ը, 900-ը, 9000-ը, բացակա է 9-ը՝ այսինքն ր-ն և այս է, որ ծածկագրված տառն է հանդիսանում: Երկրորդի մեջ կա՝ 70, 700, 7000, բացակայում է 7-ը, այսինքն՝ կ-ն. երրորդի մեջ կա՝ 6, 600, 6000, բացակայում է 60-ը, այսինքն՝ կ-ն և այլն: Սկզբունքը մեզ հայտնի դառնալուց հետո, առանց դժվարությունների, վերծանեցինք վերջը բերված երկու ծածկագրերը:

¹⁷ Տիրալը արքեպիսկոպոսի վերնագրված է «General Catalogue of the Armenian Manuscripts in the Bodlian Library at Oxford» (տե՛ս Հայկական ՍՍԽ Մատեն., Արխիվալին բաժին, Տիրալը արքեպիսկոպոսի, Դիվան, թղթ. № 119, վավ. № 1, էջ 24):

¹⁸ Հ. Աճառյան, Հայոց զրեբր, էջ 468:

Հայկական ՍՍՌ ՊԼՍՏ. Մատենադարանի № 193 ձեռագրի տեքստը վերծանվում է.

դժբ. հչւ. զոց. ժճգ. եծշ. խնտ. ժճո. բիմ. բմս.
 Թ է կ ա ր ղ ա ս Ի-
 բիս. ժճո. բիմ. զխն. զկց. էհչ. զխտ. զկց. բիս.
 մ ա ո տ ո ու ն ո ն ո մ-
 զխտ. ծշր. բիմ: Թէ կարգաս իմաստուն ոմն ես:
 ն ե ս

Այսպիսով, ծածկագրությունը վերծանվում է. «Թէ կարգաս՝ իմաստուն ոմն ես», այսինքն այն, ինչ վերծանված ձևով զբված է ծածկագրության կողքին:
 Օրսֆորդի Բոդլյան գրադարանի հիշատակարանի այդ հատվածը վերծանվում է.

ԲԻՄ. ԲՄՍ. ԲԻՍ. ՀԶԻ. ԶԿՅ. ԴԽՏ. .
 Ս Ի մ է ո ն

Որ այդ ձեռագրի գրիչն իբրեւ Սիմեոնն է, այդ երևում է հիշատակարանի հետևյալ պարբերությունից. «Յիշեսցիք զստացող սորտ զտէր Դաւիթ զպրապեան և զծնողին չւր և զիս զտառապեալ զծոցիկս զՍիմէոն լոկ անուն քահանայս»¹⁹:

Այսպիսով, Բոդլյան գրադարանի հիշատակարանի այդ հատվածը վերծանված ծածկագրով կկարգացվի. «Արդ զբեցաւ սուրբ զանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ, անծան և անծող զբչի Սիմէոն լոկ անուն երեցունի, որպի լուցբացի պարոն Նիկոլայոսին»:

§ 7

Հայագիտության մեջ մինչև այժմ թերի է համարվում «բժշկական» կոչվող ծածկագրությունը:

Բժշկական ծածկագրության մասին առաջին անգամ խոսել է բանասեր Ն. Քարամյանը 1886 թվականին իր «Քսան և մեկ նշանագրեր, մի կորած այբուբենից» վերնագրով հոդվածում, և հրատարակել այն Բեռլինի Արքունական Մատենադարանի հայկական մի ձեռագրից: Այս խմբի ծածկագրությունը հետևյալն է.

Չժշկական 2561 Նոյնիս ԶԿԵՆՆ
 Ն.Նոյնիս ԶԿԵՆՆ 20

Քարամյանը, ճիշտ վերծանելով ծածկագրությունը՝ «Յիշեսցիք զմեղապարտ Յովտափ սարկաւաքն» ձևով, սխալ եզրակացություն է հանգել տառերի նկատմամբ՝ համարելով գրանք ազվանական գրեր: Լուր երևույթին, նրան շփոթության մեջ է գցել նշված տեքստի կողքին եղած «Գիր աղւսնից» հիշատակությունը, որը, ինչպես ասացուցել է պրոֆ. Աճառյանը, իրապես ունի ոչ թե աղւսնից գիրն է, այլ աղուհագիր է, այսինքն՝ ծածկագիր է իմաստը:

1902 թվականին այս նույն ծածկագրին անդրադարձել է Ֆ. Մուրադը «Հանդէս ամսօրեայ»-ում տեղավորած իր «Նշանագիրք իմաստնոց» հոդվածում, և հակասակ Քարամյանի ասացուցել, որ այն ո՛չ թե ազվանական գիր է, այլ սովորական հայկական ծածկագրություն²¹:

Բժշկական ծածկագրության մասին հանդամանորեն խոսել է պրոֆ. Հ. Աճառյանը իր «Հայոց գրեր»-ի²² մեջ: Նա ծածկագրության այս տեսակը բժշկական է անվանել նկատի ունենալով ծածկագիրը պարունակող ձեռագրի լուսնիկությունը: Արտասահման

¹⁹ «General Catalogue of the Arm. Man. in the Bodlian Library at Oxford» (№ 2 ձեռ. հիշատակարանը):

²⁰ Ms. Orientquart 805, թ. 103ր:

²¹ «Հանդէս ամսօրեայ», 1903, էջ 334:

²² Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 471:

նից նրան ուղարկված այդ խմբի ծածկագրության մի տեքստ ընդօրինակված է եղել Սե-
րասիայում գտնված մի ձեռագրում, որը բովանդակությամբ բժշկական է եղել:

Պրոֆ. Հ. Աճառյանը, Քարամյանցի վերը բերված ծածկագիր տեքստի և Սերաս-
տիայից ստացած ծածկագիր բառերի հիման վրա կազմել է ծածկագիր 26 նշանների
ցանկը, իսկ հայկական այբուբենի մյուս 12 տառանիչների նշանագրերի տեղերը բաց է
թողել, որպեսզի հետագայում հայտնի լինելու դեպքում գրանք լրացվեն²³:

Պրոֆ. Հ. Աճառյանի արտասահմանից ստացած մի տեղեկությունից երևում է, որ
բժշկական ծածկագրության բանալին հայտնի է եղել ռուսերիցների նեղ շրջանում:
Նրանք իրենց արհեստի զարգացմանը ծածկագրելիս են եղել այս նշանագրերով, սակայն
խուսափել են հայտնել ծածկագրության բանալին, որովհետև լեզուն, — ինչպես գրել են
արտասահմանից պրոֆ. Աճառյանին, — իրենց երգում տված են եղել, ուստի ծածկագրին
զադանիքն երևան չեն հանել²⁴:

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենագարանում, բարերախտարար, դոնյեցին այս խմբի
ծածկագրերի մի քանի տեքստեր, որոնց հիման վրա այժմ հնարավոր է լրացնել պրոֆ.
Հ. Աճառյանի կազմած այս ծածկագրի այբուբենի պահպան ցանկը և վերծանել չվերծան-
ված ծածկագրերը:

Անհրաժեշտ ենք համարում նախ բերել բժշկական ծածկագրության մեր լրացրած
ամբողջական բանալին, ապա տալ ծածկագրի տեքստերը և նրանց վերծանությունը:

Ն	ա	Օ	ժ	Ծ	ճ	Շ	ռ
Բ	բ	Փ	Ի	Ն	յ	Վ	ւ
Զ	զ	Կ	լ	Պ	լ	Վ	ւ
Զ	շ	Խ	խ	Ը	ն	Մ	ր
Ե	ե	Վ	ծ	Յ	շ	Ր	ր
Զ	չ	Ն	չ	Դ	ո	Յ	ց
Զ	է	Մ	հ	Ը	շ	Օ	ւ
Զ	ւ	Զ	ւ	Մ	ւ	Ն	փ
Ր	բ	Օ	շ	Շ	շ	Շ	բ

Բժշկական ծածկագրության բանալին

Հայկական ՍՍՌ Պետ. Մատենագարանի № 6644 ձեռագրի գրիչ Եղիշ Կրանավորը,
1527 թվականին իր ընդօրինակած ձեռագրի մեջ թողել է բժշկական հետևյալ ծածկագիր
տեքստերը:

Առաջին ծածկագրությունն ա ս է.

«Թէ կարգաս, ես քեզ ծառայ եմ»:

Երկրորդը: Երկրորդը: Նրա օճառ-ճառ

Երկրորդը: Նրա օճառ-ճառ

²³ Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 472—473:

²⁴ Նույն տեղում, էջ 473:

²⁵ Հայկական ՍՍՌ Պետ. Մատենագարան, ձեռ. № 6344, թ. 144ր:

Ներկա ծածկագրությունը վերծանվում է.

$\text{ՄԷԿ ՄԷԿ Բ 000} \dots \text{Փ 0000} \dots \text{Օ} \dots \text{00}$
 $\text{Դ (ա + ա + Բ = Դ) Ա Ի Բ Է Դ}$
 $\text{Փ Օ Ն Կ Փ Ե Ն 000' Յ Ե}$
 $\text{Ի Է ա յ Ի Ն. ա Մ Է Ն:}$

«Արդ զրեցաւ ձեռամբ զպիր եղիային, ամէն».

Այսպիսով, ծածկագրության վերծանությունից պարզվում է, որ Անկյուրիայի № 133 ձեռագրի գրիչը զպիր եղիան է հանդիսացել:

§ 8

Անգլիացի հայագետ Գոնիբերր Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի իր կազմած ցուցակում № 98-ի տակ հրատարակել է կարապետ գրչի հիշատակարանը, ուր կա հետևյալ դումարգիր ծածկագիրը.

«Յակոբոսն և բնտանիք իւր յիշեսցիք ի ՔՍ ՅՍ.

ՃՃ Ա ՍՎ ՈՈ ԺԺ ՍՎ ՅՅ ՌՌ ԺԺ ՐՏ ՌՌ

ՌՌ ՍՍ ԵԴ ՏՏ Ա ՄՄ ՅՅ ՌՌ ԺԺ ՐՏ ՌՌ

ՃԾՃԾ Ե Ե Ես կարապետ գրիչս յիշեսցիք ի ՔՍ ՅՍ ամէն»³¹:

Գոնիբերր վերը բերված պարբերությունը թարգմանել է հետևյալ ձևով. «May Jacobus and his intimates be remembered in Jesus Christ... And may I myself, Karapet the Scribe, be remembered in J. C. Amen»՝ բաց թողնելով ծածկագրությունը³²:

Ծածկագրության մեջ ուղղելով որոշ սխալներ, որոնք բաց են թողնվել գրչի և տպագրիչի մեղրով, առաջին շարքի չորրորդ երկտառն ուղղելով ՍՍ ձևով, երկրորդ շարքի երրորդ երկտառի ԵԴ-ից դուրս նետելով Դ-ն որպես ավելորդ տառ, երրորդ շարքի առաջին տառախմբի ՃԾՃԾ-ից հետո Ե տառը փոխարինելով Ս-ով, վերծանվում է.

ՃՃ Ա ՍՎ ՍՍ ԺԺ ՍՎ ՅՅ ՌՌ ՐՏ ՌՌ

Մ ա ր ո ի ր ո ս ի ք Ս

ՌՌ ՍՍ Ե ՏՏ Ա ՄՄ ՅՅ ՌՌ ԺԺ ՐՏ ՌՌ ՃԾՃԾ Ս

Ս ա Ե փ ա ն ո ս ի ք Ս Յ Ս

Ամբողջ տեքստը կլինի. «Յակոբոսն և բնտանիքն իւր յիշեսցիք ի ՔՍ ՅՍ, Մարտիրոս ի ՔՍ, Ստեփանոս ի ՔՍ ՅՍ և Ես կարապետ գրիչս ի ՔՍ ՅՍ, ամէն»:

Ի դեպ, դումարգրով ծածկագրություն կազմելը սովորական է եղել հունական մատենագրության մեջ (տե՛ս V. Gardthausen, Griechische palaeographie, Leipzig, 1913, թ. 314—316):

§ 9

Հայկական ձեռագրերը, ընդհանրապես, վերծանվում են միայն մեկ բանալիով, սակայն մեկ-մեկ պատահում են և երկրանալի ծածկագրեր: Նման ծածկագրության մի ընտիր նմուշ պահել է Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարանի № 1424 ձեռագիրը՝ 1620 թվականի գրչությամբ³³: Ծածկագրությունը վերծանելու համար անհրաժեշտ է լինում նախ դործածել միաթամանակ դումարգիր ծածկագրի բանալին և ստացված տեքստն այնուհետև բաց անել փոխարինարի ծածկագրով: Լստ որում, փոխարինարի ծածկագրով բաց անելիս անհրաժեշտ է լինում դործածել ո՛չ թե մեկ բանալի, այլ մեկ ծանոթ երեք բանալիներն էլ: Բերում ենք ծածկագիրը և մեր վերծանությունը.

³¹ F. C. Conybaere, Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913, p. 240.

³² Նույն տեղում, թ. 240:

Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարան, ձեռ. № 1424 թ. 145ա:

Առաջին վերծանությունը գումարգիր ծածկագրով.

յյ. աա. յմ. բա. շշ. նն. շշ. յմ. բբ. վո. շշ. ա. շշ.
 ո. ք. շ. բ. ո. պ. ո. շ. դ. ք. ո. ո. ո.
 ճճ. բա. ճճ. դա. յմ. սո. շշ. բա. շշ. ցո. դա. ոո. /բ/
 մ. գ. մ. ե. շ. վ. ո. ք. ո. լ. ե. ս:

Երկրորդ վերծանությունը փոխարինագիր ծածկագրի երեք բանալիներով.

ո.	բ.	շ.	ք.	ս.	պ.	ո.	շ.	դ.	բ.	ս.	ա.	ն.
					պ		բ					
դ	մ	ե	դ						ժ	ա		
				ա		ա		ա			ո	ա

մ.	գ.	մ.	ե.	շ.	վ.	ո.	ք.	ո.	լ.	ե.	ս.
ա									չ		մ
	յ		շ	ե	լ		դ				
		ի				ա		ա		ե	

Այսպիսով, Հայկ. ՄՄՌ Պետ. Մատենադարանի № 1424 ձեռագրի երկհարկ ծածկագիրը գումարգիր և փոխարինագիր ծածկագրերով վերծանվում է. ռեզուլտատը ծառայում է յիշել ազատում:

§ 10

Գծակեագիր ծածկագրի վերին աստիճանի հետաքրքիր մի նմուշ ունի Անթիլիասի՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի ձեռագրերի հավաքածուի մի խորհրդատետր, սրի լուսանկարը բերում ենք հաջորդ էջում³⁴:

Սյունագիր այս ծածկագրությունը մեզ հաջողվեց վերծանել մեծ զգվարություն, որովհետև մեզ հայտնի երեք փոխարինագիր բանալիներից ո՛չ մեկն էլ առանձին-առանձին չկարողացան բաց անել այն: Փորձեցինք բաց անել եզրայրագիր և փոխարինագիր ծածկագրերով միաժամանակ, դարձյալ ոչինչ չստացվեց: Հետո միայն պարզվեց, որ ծածկագրությունը բաց անելու համար անհրաժեշտ է գործածել եզրայրագիր ծածկագրի երեք բանալիները. մի գեղքում տառը թողնվում է նույնությամբ, երկրորդ գեղքում՝ վերցվում է ծածկագրված տառի նախորդը ըստ հայերեն այբուբենի շարքի և երրորդ գեղքում՝ վերցվում է նախորդի առաջինը:

Ի դեպ, այս նույն ծածկագրությունը, մեզնից անկախ, վերծանել էր և մեր Անթիլիասում եղած ժամանակ ցույց է ավել Մեսրոպ վ. Ուղմյուրդչյանը, մի շնորհալի երիտասարդ բանասեր, որը կազմում էր Անթիլիասի հայերեն ձեռագրերի ցուցակը:

Ներկա ծածկագրությունն արժեքավոր է այն տեսակետից, որ այն վերջին շրջանից մեզ հասած միակ ծածկագրությունն է, որը կազմված է իրապես ծածկագրության նպատակով և զբաղադ չէ: Ծածկագրության հեղինակն է բանասեր Տրդատ եպիսկոպոս Պալյանը, որը ծածկագիր հայտնում է այն մասին, որ իրենք մի վանքի բակում քարե արկղի մեջ դանձ են թաքցրել (այդ վանքը գտնվում է Արևմտյան Հայաստանում և նրա անունը որոշ նկատառումով չենք ուղղում տալ): Բերում ենք այդնագիրը, մեր այբուբենի վերածված տեքստը և նրա վերծանությունը:

³⁴ Այս խորհրդատետրն այժմ գտնվում է Անթիլիասում, համարը չենք հիշում:

Կարգայ եւ զուժ աշուճեցնեալսն զքրքրաւորսն:

Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #
 Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞
 Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #
 Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞
 Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #
 Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #
 Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #
 Եւ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ #
 Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ # Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #
 Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Եւ Ո՞՞՞՞ Եւ
 Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ # Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ #
 Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #
 Եւ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #
 Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞
 Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ # Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞
 Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ # Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Ո՞՞՞՞ #
 Եւ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ Եւ Ո՞՞՞՞ #



ցփղղո զպվ պրխեան
 Տրդատ Եսս Պալեան.

Վզշքլո կլց ոլշ
 Վանքին կից շին-

դճ վզցլղղղոլ յղկ
 ամ սարլարանի մեծ

վրբճլ շեցբեշ հ-
 սրանի շենքին. հ-

Լվլվղղղ շաշէշ
 իսսիսային ղոնէն

զոփղվ փոբբլկ
 ղոսրս, փոքրիկ

բղկլշ լրջ ղղղկ
 փակին մէջ եղած

լզնեոփկզղղղրո
 սանդուխներուն

վղղլ կղղլ լղղն
 վերի կողմ լերան

բղղլ լրբոլ հրգ
 փորել տալով. ետա-

փ բբբր վջջջղղ
 բ քարէ սնտուկ,

ոցոփշ յրջ կղշ
 ոլուն մէջ կան

ղրշղղղղ լրբր թրբր
 զանազան իրեր, քլ|պլէտ

ցպ գոպրփ բցբր
 ոշ այնքան արժե-

բզփոց եշ ծշեց
 քաւոր են: Խնդր-

ղլ յլոզցբբ յլոց
 նմ յիշեցէք միշտ

ղաշղրթղշի
 զանարժանի[ս]:

Բոլոր տեսակի սյունագիր ծածկագրերը վերծանելիս, պիտի նկատի ունենալ, որ ծածկագրող հեղինակները հաճախ շփոթում են սյունագծերը և կետերը, ավելի կամ պակաս նշանակում, ուստի և վերծանելիս, երբ ծածկագրությունը չի բացվում, պիտի փորձել դործածության մեջ դնել նախորդ կամ հաջորդ տառերը, ինչպես և՛ հայկական այբուբենի նախորդ կամ հաջորդ համարաշարքը:

§ 11

Բանասեր Բ. Վ. Կյուլենբերյանի կազմած Ղալաթիայի հայկական ձեռագրերի ցուցակում, որը զմբախտարար, դեռևս մեռած է չհրատարակված, բերված է № 265 ձեռագրի հիշատակարանը եղբայրացի ծածկագրով: Կյուլենբերյանին չի հաջողվել վերծանել ծածկագրությունը:

Երբուսի Ենք ծածկագրության տեքստը և նրա վերծանությունը.

Գ. Յ. Ջ. Վ. Բ. Փ. Ղ. Ջ. Ս. Բ. Յ. Գ.:
Գ. Բ. Ե. Գ. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե.
Բ. Գ. Յ. Բ. Ջ. Բ. Յ. Լ. Ե.³⁵
Ա. Բ. Բ. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե.

Այսպիսով, Ղալաթիայի № 265 ձեռագրի ծածկագրված տեքստի հեղինակն է Աբրահամը՝ «Բրեցաւ ձեռամբ Աբրահամին»:

§ 12

Եղբայրացի ծածկագրով զաղտնագրված մի բառ իր ձեռագրաց ցուցակում բերել է բանասեր Բ. Սարգսյանը և ծանոթ չլինելով նրա բանալու հետ, թողել է ասանց վերծանություն: Ստորև բերում ենք Սարգսյանի հրատարակած այդ ծածկագրի բառը պարունակող նախադասությունը. «Արտակայեցաւ բանք այս ձեռամբ Ս. Բ. Ս. Բ. Յ. Պոստաղիգէ ի թուարեւութեան Հայկազեան սեփ հարիւր տասն և երկու»³⁶:

Ծածկագրությունը վերծանվում է.

Ս. Բ. Ս. Բ. Բ. Յ.
Վ. Ե. Բ. Գ. Ե. Ե.

Սյուպիսով, Միսիթարյանների նշած ձեռագրի գրիչը Վարդանն է:

§ 13

Հայկ. ՍՍԻ Պետ. Մատենադարանի № 6644 ձեռագրի գրիչը՝ Եղիշե Արեւելցին, 1527 թվականին ընդօրինակած ձեռագրի մեջ թողել է եղբայրացի հետեյալ ծածկագրություն.

Բց. Բկ. չճ. չցյ. գրն. և չ. կրս. Բն. Լս:
Տր. Ած. ող. որմ. եայ. և զ. ծաւ. այ. Խս

Վչփր. Բչ. չփչ. հց. Բփչ. Բճ. չց. Լ. զճ.
սուտ. ան. ուն. կր. աւն. ա. որ. Ի. Եղ-

Լո. Բն. Բղ. զճ. Բն. Լ. Լ. զցհց. Բչ. Բց.
Իչ. այ. ար. եղ. այ. Ի. Ի. երկր. էն. Արց-

Բճ. չփ. չց. հչպ. Լ. Տ. Բպրչ³⁷
ախ. ու, որ. կոչ. Ի. Խ. Ե. չեն

«Տէր Սծ ոգորմեայ և զծառայիս՝ սուտանուն կրաւնաւորի Եղիշայ արեղայի Ի երկրէն Արցախու, որ կոչի Խաչէն»:

Եղիշե Արեւելցու մի այլ ծածկագրի մասին խոսեցինք վերևում:

³⁵ Օգտվել ենք Բ. Վ. Կյուլենբերյանի ցուցակից Բեյրութում մեր գտնված ժամանակ:

³⁶ Հ. Բ. Սարգսյանի ձեռագրաց ցուցակ, հ. 1, էջ 527:

³⁷ Հայկական ՍՍԻ Պետ. Մատենադարան, ձեռ. № 6644, թ. 154ր:

Автор установил, что в первой заключено имя заказчика, а во второй имя переписчика рукописи.

Востоковед Ф. Конибер в своем «Каталоге армянских рукописей» („Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum“) опубликовал „числительную тайнопись“, но не расшифровал ее.

После исправления некоторых ошибок, допущенных, по-видимому, при издании текста, он легко поддался расшифровке. В нем засекречены имена двух лиц — Мартироса и Стефана, по заказу которых была, очевидно, переписана рукопись.

В своей книге «Армянское письмо» известный арменовед проф. Р. Ачарян опубликовал ряд ключей к армянским тайнописям, в том числе к «медицинской тайнописи». Однако азбука последней не была полной.

Среди рукописей Матенадарана автор обнаружил ряд неизвестных текстов этой тайнописи и полностью расшифровал их, дополнив недостающий текст ключа «медицинской тайнописи».

Филолог Б. Сарксян в «Каталоге рукописей венских мхитаристов» приводит без расшифровки неизвестную тайнопись, состоящую из армянских букв и точек. Подобная же тайнопись заключена в рукописи № 5198, находящейся в Матенадаране.

Как выяснилось из исследований автора, точки показывают четыре ряда армянского алфавита, а буквы — порядковый номер. Оба текста легко поддаются расшифровке.

«В каталоге армянских рукописей собрания Оксфордского университета», составленном архиепископом Тирайром, приведен необычный текст армянской тайнописи, который состоит из армянских букв, сгруппированных по три. Такой же текст встречается в Матенадаране в рукописи № 193. Как выяснил автор статьи, буквы расшифрованного им текста нужно искать не в самой тайнописи, а вне ее: армянский алфавит разделен здесь на четыре части и по порядку группирует однозначные четыре буквы, пропуская те, которые составляют расшифрованный текст.

В одной рукописи из коллекции рукописей Киликийского Католикосата (Ливан) имеется столбцовая тайнопись. Оказалось, что в тексте зашифрованы сведения о местонахождении скрытого каменного сундука с драгоценностями.

Автор статьи расшифровал и ряд других тайнописей, которые представляют большую ценность для армянской филологии.